



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԴԵՐԵՆԻԿ

796.5
Դ-43

ՊՐԱԼԵ **S** ԱՐԱԿԱՆ
ՈՒՐԻՉՄԻ
ՄԱՍԻՆ

ՊԵՏԱՐԱՏ
ՈԱԶՄԱՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ
1932

796.5
7-43

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ՄԱՍԻՆ

«Յերիտասարդութեան անձնակազմը անհրաժեշտ է կենսորակութիւնը և առեւտրութիւնը, առողջ սպորտը, մարմնամարզութիւնը, լողը, եքսկուրսիաները, ամեն տեսակի ֆիզիկական վարժութիւնները, մտավոր շահերէ բաղման հոգեմեծութիւնը, ուսուցումը, վերալուծումը, հետազոտութիւնը, և այս ամենը ըստ հնարավորի միատեղ»:

Վ. Ի. Լենին

1007
33695

Խորհրդային Միութեան մեջ գնալով ծախսով վրամ է մի կազմակերպութիւնը, վրն իր վրա յեղրավել ամբողջ աշխատավորութեան ուղարկութիւնը. դա պրոլետ-տուրիստական կազմակերպութիւնն է, վրն այսօր ունի մեկ միլիոնից ավելի անդամ:

Շատ կարճ պատմութիւն ունի այս ընկերութիւնը, բայց, չնայած դրան, աշխատավորութիւնն ավելի ու ավելի յե հետաքրքրվում այս կազմակերպութեամբ և համախմբվում է նրա շուրջը:

Անցյալներում յեղել են զանազան ակցիոններ, բազմաթիւ տուրիստական ընկերութիւններ,

խորհրդային տուրիզմ, վորոնք ժամանակին տուրք են տվել թափառաչրջիկության, ժամափաճառության: Սակայն, խորհրդային կառավարության վարչամամբ, այդ սխառեմները վաղուց լիկվիդացիայի յեն յենթարկվել և դրանց փոխարեն ըստեղծվել է «Պրոլետ-Տուրիստական Երկուրսին Ընկերությունը», վորը գործում է կուսակցության, կառավարության և այլ ուղաններ ճշմարտության առկ: Ժողովրդական տնտեսության պարզացման ասպարիկում հնգամյակի 4-րդ յեզրամակման տարում այս կազմակերպության աշխատանքներն ավելի հրատապ և այժմեյական են դառնում, քան յերբեիցե: Այսօր, յերբ խորհրդային Միության ամենահեռավոր ծայրամասերում ծավալվում է չտեսնված գիգանտների կառուցումը, յերբ գյուղերում լիկվիդացիայի յեն յենթարկվում անհատական տնտեսությունները և նրանց տեղ կազմակերպվում են խոշոր կոլտնտեսություններ և խորհտնտեսություններ, բանվոր դասակարգի ջանքերով կառուցվում են սոցիալիստական տիպի քաղաքներ, յերբ գործարկվում են սոցիալիստական արդյունաբերության չտեսնված գիգանտներ, անհրաժեշտ է, վոր խորհրդային Միության ստեղծագործող ուժը՝ բանվոր դասակարգը՝ մոտիկից ու կազմակերպված գիտի այն

հսկայական սոցիալիստական նվաճումները, վոր կատարվում են խորհրդային Միության բոլոր հեռավոր վայրերում: Այս գիտումներից գիտական արդյունք ստանալու համար, անհրաժեշտ է անպայման ունենալ կազմակերպված Պրոլետ-Տուրիստական Երկուրսին Ընկերություն (ՊՏԵԸ), վորը միայն ընդունակ է այդ աշխատանքները կատարելու: Պրոլետ-տուրիզմն ստեղծում է յեղբայրական կապ տարրեր ազգերի միջև, ավելի յեռեցեղանում ինտերնացիոնալ դաստիարակությունը, ստեղծում է կոլեկտիվ կյանք և զարկ է տալիս կոլեկտիվիզմին, վորը կուսակցության և խորհրդային իշխանության ամենահիմնական սկզբունքային խնդիրներից մեկն է: Այս կազմակերպությունը խոշոր անելիքներ ունի պրոլետարիատի գիտական-կուլտուրական մակարդակի բարձրացման ասպարիկում: Ինչպես մյուս հաստիարակական կազմակերպությունները, նույնպես և պրոլետ-տուրիստական կազմակերպությունը, հսկայական անելիքներ ունի սոցիալիզմի կառուցման ու նրա վերջնական հաղթանակի գործում: Բուրժուական յերկիրներում խոշոր ծավալ և

ՊՐՈԼԵՏՏՈՒՐԻԶՄԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Ե ԳԻՏԱԿԻՑՈՒ ՏՈԿՈՒՆ ՄԱՐՏԻԿՆԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

ստացել տուրիզմը: Ինչպես մյուս կազմակերպութ-
վոյունների, նույնպես և այս կազմակերպութ-
վան բուրժուազիան պատշաճ ուշադրութ-
յուն ե դարձնում, վորովհետեւ այս կազմակերպութ-
վան միջոցով պատրաստում ե իր դասակարգի սեփա-
կանատիրական հոգեբանութ-
յամբ դաստիարակ-
ված մարդիկ, վորոնցով հարստացում ե իր ռազ-
մական ուժերը: Բուրժուական տուրիզմը ծառա-
յում ե անհատ կապիտալիստներին ստոր պահանջ-
ները բավարարելու համար: Ինչպես սկսուտա-
կան և այլ կազմակերպութ-
վոյունները, նույնպես և
տուրիզմը, պատրաստում ե հայրենիքի և կրոնի
համար դինված մարդիկ՝ պաշտպանելու բուր-
ժուական հայրենիքը: Տուրիզմը կապիտալիստա-
կան յերկիրներում մի կողմից նպաստում ե թա-
փառաշրջիկութ-
յան, մեղադրանքութ-
յան հանույ-
քին ու ժամանցին, իսկ մյուս կողմից՝ ծառայում ե
կապիտալիստների ամենաստոր պահանջներին:

Բանվոր դասակարգը հեռու յե բուրժուական
տուրիզմից: Բանվոր դասակարգն այսօր ձեռակեր-
պում ու ստեղծում ե իր սեփական տուրիզմը՝
պրոլետարական կազմակերպութ-
յան ձևով: Պրո-
լետ-տուրիզմն իր բովանդակութ-
յամբ ու ձևով տարբերվում ե բուրժուական տուրիզմից: Այսօր
այդ հակայական կազմակերպութ-
յունը մեղ մոտ
վոչ թե զարգացնում ե թափառաշրջիկութ-
յուն,

հանույք ու ժամանց, այլ ընդհակառակը՝ ամե-
նապիտիկ, դործոն մասնակցութ-
յուն ե ցույց տալիս սոցիալիստական շինարարութ-
յանը: Պրո-
լետ-տուրիստն ամենաընդունակն ե ու հարվածա-
յինը պլանների կատարման ու գերակատարման
ասպարիզում: Պրոլետ-տուրիստն այսօր ամենա-
լավագույն պրոպագանդիստն ե մեր այն բոլոր
կամպանիաների, վոր հանձնարարում ե կուսակե-
ցութ-
յունն ու իշխանութ-
յունը: Համատարած կո-
լեկտիվացում, ստալինյան պատմական 6 կետերի
մասսայականացում, տեխնիկայի տիրապետում,
կուլտուրական հեղափոխութ-
յուն՝ ահա սրանց
ամենապիտիկ մասսայականացնողը պրոլետարա-
կան տուրիստն ե: Պրոլետարական տուրիզմը կազ-
մակերպված ձևով ծառայում ե բանվոր դասա-
կարգի կուլտուրական պահանջներին: Կոլեկտի-
վիզմի, ինտերնացիոնալիզմի ամենաուժեղ զար-
գացնողներից մեկը մեր յերկրում պրոլետարական
տուրիզմն ե: Այս կազմակերպութ-
յունը զարգա-
նում ե ժողտնտեսութ-
յան զուգընթաց, վորովհե-
տե սոցիալիզմի կառուցման ամենապիտիկ մե-
թոդներից մեկը տուրիստական կազմակերպութ-
յունն ե:

Աշխատավորութ-
յունն ընդհուպ պետք ե մո-
տենա այս կազմակերպութ-
յանը և նրան ամբող-

ջուլին ոգտադործի, վորպես իր հանգիստը գիտականապես կազմակերպողի :

Պրոլետ-տուրիզմը նպաստում է ժողովրդականության արադընթաց զարգացմանը : Տուրիստը պետք է լինի հարվածային իր աշխատանքների թացքում, աջակցի պլաններին կատարմանն ու գերակատարմանը : Վոչ մի տուրիստ հետ չպետք է մնա բայլչեիկյան տեմպերից :

Տուրիստը փորձերի փոխանակման կարգով պետք է մեխանիզացիա մտցնի իր արտադրութայն մեջ, ստեղծադործող պետք է լինի իր աշխատանքների պրոցեսում : Նա եքսկուրսիաների ժամանակ պետք է կատարի գիտական ուսումնասիրություններ, վորոնումներ և վորեւիցե նորություն հայտարեբելու դեպքում՝ անմիջապես մտցնի արտադրութայն մեջ : Տուրիստը պետք է լինի կուլտուրան քաղաքից գյուղ տեղավորող առաջավոր մարտիկը : Նա պետք է լինի գյուղի և քաղաքի կենդանի կապի ամրացնողը : Նա պետք է մասնաշարժանացնի կուսակցութայն և խորհրդա-

յին իշխանութայն բոլոր մարտական գիրքերով-ներն ու վորոշումները :

Մեր յերկիրը բնական հարստություններին մի ծով և, թե իր հանքերի բազմազանությամբ, թե իր հանքային ջրերով և թե բազմաթիվ այլ հարստություններով, վորոնք դեռ մինչև այսօր ել չարունակում են մնալ յերկրի արգանդում : Տրնտեսապես իշխանությունը հնարավորություն չունի մեր այդ բոլոր հանքային հարստություններն ուսումնասիրութայն յենթարկել : Այստեղ մնում է հաճախակի գիտա-հետազոտական եքսկուրսիաների միջոցով հայտարեբել նման հարստությունները, իսկ այս գործում հսկայական անելիքներ ունեն պրոլետ-տուրիստները :

Տուրիստը պետք է լինի գյուտարար, ստեղծադործող և ամենաակտիվ մասնակցողը սոցիալիստական շինարարութայն վերելքին :

Պրոլետ-տուրիզմի խնդիրն է՝ մոտիկից ծանոթանալ սոցիալ խորհրդային Միութայն, մոտիկից տեսնել ու գիտել ծավալուն սոցիալիստական շինարարությունը, կազմակերպված եքսկուրսիաների միջոցով ուսումնասիրել խորհրդային Միութ-

ՏՈՒՐԻԶՄԸ ՆՊԱՍՏՈՒՄ Ե ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆԸ.

ԿՈՐՁԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԸ՝ ԹԱՓԱՌԱՇՐՁԻԿՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄԵՇՁԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾՈՂԸ

Թյան մեջ ապրող տարբեր ազգերի կուլտուրաներն ու կենցաղը, ծանոթանալ և ուսումնասիրել Միւսթյան անթիվ ու բազմապիսի բնական հարստութիւնները, դիտել բնութիւնը, աշխարհագրական դիրքը, տեսնել կառուցված և կառուցվող գիղանոցները, գործարանները, հանքերը, ելեկտրոկայանները և այլն:

Պրոլետարական տուրիզմը՝

Ջարկ եւ տալիս կոլեկտիվ կյանքին, վորովհետեւ մի հոգուց եքսկուրսիաներ չեն կազմակերպվում, այլ նվազագույնը՝ յերեք հոգուց:

Ուժեղացնում ե զանազան ազգութիւնների աշխատավորութեան կապերը, զարկ ե տալիս ինտերնացիոնալ դաստիարակութեանը և ավելի ուժեղացնում ե յեղբայրական կապի ամրացումը:

Ամուր հիմքերի վրա յե դնում աշխատավոր յերիտասարդութեան Ֆիզիկական առողջութեան դործը, նրանց տալիս ե ռազմական պատրաստականութիւն, նրանց կոփում, մարզում և դարձնում ե աննկուն մարտիկներ՝ սոցիալիստական շինարարութեան նվաճումները պաշտպանելու համար: Աշխատավոր յերիտասարդութիւնը ծանոթանում ե իր յերկրին, իսկ լավ տուրիստը նա յե, ով լավ ե ճանաչում իր յերկիրը, շինարարութիւնը, հարստութիւնները և այլն:

Կազմակերպում ե գիտա-հետազոտական աշխատանքներ՝ նախորոք մանրագննին և գիտակա-նորեն մշակված մարշրուտներով: Գիտա-հետա-զոտական աշխատանքների ընթացքում, յերբ մեկը հայտաբերում ե մի քար, մյուսը՝ մի հանքային աղբյուր, յերրորդը՝ մի հազվագիւտ բույս և յերբ ուսումնասիրութեան ե յենթարկվում այդ հայտաբերումները, պարզվում ե, վոր դրանք, որինակ՝ քարը արտադրութեան մեջ խոշոր ոգուտներ կարող են տալ, այդ աղբյուրը բժշկութեան մեջ մեծ դեր կարող ե խաղալ, բույսից կարելի յե պատրաստել անհրաժեշտ դեղեր և այլն:

Մեր այսորվա գործածական նյութերից չատշատերը հենց այդ ճանապարհով են ստացվել: Պրոլետ-տուրիստական կազմակերպութիւնը հաճախակի գիտական ուժերի հետ միասին կազմակերպում ե գիտա-հետախուզական եքսկուրսիաներ՝ յերկրի զանազան կողմերը՝ հայտաբերելով սոցիալիստական շինարարութեան համար հսկայական կարևորութիւն ունեցող նյութեր, նորութիւններ:

Տուրիզմը խոշոր չափով պայմանավորվում ե Ֆիզիկական առողջութեամբ, սիստեմատիկաբար Ֆիզիկուլտուրայով պարապելով: Տուրիստը պետք

ե լինի Ֆիզիկապես առողջ և ղեմացելուն, վոր-
պեսպի կարողանա հաղթահարել բարձր լեռները,
յերկար ճանապարհները, և այլն:

Յեւ, վերջապես, պրոլետ-տուրիստական և
եքսկուրսիան ընկերությունը խոշոր անելիքներ
ունեն մեր աշխատավորության հանգիստը կադ-
մակերպելու գործում: Հստակ մեր բանվորներն
ու ծառայողներն ստանում են արձակուրդ, բայց
չգիտեն ինչպես տգտագործել այն, վորպեսպի
հանգիստն ավելի արդյունավետ և ավելի կուլ-
տուրական լինի: Ահա սրանց համար կադմակեր-
պությունը ձեռնարկում է զանազան եքսկուրսիա-
ներ՝ նախորդ մշակված մարչրուտներով՝ վորոնք
լինում են թե գյուղատնտեսական և թե արդյու-
նաբերական բնույթի: Արձակուրդ ստացող աշխա-
տավորն, ըստ իր մասնագիտության, կատարում է
եքսկուրսիա, դրա ընթացքում ուսումնասիրում է
այն բոլորը, ինչ տեսնում է և ալդտեղից վեր-
ցնում է այն, ինչ չկա իր գործարանում կամ հիմ-
նարկության մեջ, բայց հնաքաւոր և մտցնել:
Այսպիսով՝ արձակուրդ ստացող բանվորը նախ՝
կուլտուրականապես կադմակերպում է իր հան-
գիստը և յերկրորդ՝ իր հանգիստը կադմակերպե-
լու հետ միաժամանակ ոգտագործում և զանազան
տեղերի լավագույն փորձը և փոխադրում այն իր

ձեռնարկություն: Եքսկուրսիաները կադմակերպ-
վում են վոչ թե անալոգիան արձակուրդ ստա-
նալիս, այլ նույնիսկ հանգստյան որերին: Միորյա
եքսկուրսիաներ են կադմակերպվում դէպի զա-
նազան գործարանները, կուլտնտեսությունները,
խորհրդատեսությունները, թանգարանները և
այլն: Այդ եքսկուրսիաներին մասնակցում են նաև
ընտանիքի անդամները:

Պրոլետ-տուրիստական կադմակերպությունն
իրեն կից ունի կոնսուլտացիոն (խորհրդատու)
բյուրո և եքսկուրսիա գնացող ընկերներին տալիս
է խորհուրդներ այն մասին, թե ընդհանրապես
ինչպես կադմակերպել եքսկուրսիաները, վորպես-
պի ավելի արդյունավետ լինի:

Առողջ մարդը պետք է իր հանգիստը գտնի
սոցիալիստական շինարարության նվաճումները
տեսնելու մեջ: Միայն վատառողջներն են, վոր
իրենց հանգիստը կգտնեն սանատորիաներում և
հանգստյան տներում:

ՏՈՒՐԻՍՏԸ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳՈՐԾԻՉ. ՆԱ ԳՅՈՒՂ Ե ՏԱՆՈՒՄ ԿՈՍՏՆԻՒՍԱ-
ԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՆ:

ՀԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՑ ԿՈՒԼՏՈՒՐ-ՔԱ-
ՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ՝ ԴԱՍԱՐԿ ԺԱՄԱՆՑ Ե.

Պրոլետարտուրիզմը հսկայական անելիքներ ունի նաև յերկրի պաշտպանութեան ամրացման գործում :

Հունգարական ռազմագետ Չանտը գտնում է, վոր 1915 թ. ձմռանը Կարպատներում տեղի ունեցած կռիվում ռուսական զորքերը ջախջախվեցին այն պատճառով, վոր նրանց մոտ գոյութիւն չէր ունեցել կազմակերպված լեռնային տուրիզմ և ծանոթ չեն յեղել լեռնային ճանապարհներին ու պայմաններին : Իսկ ավստրիական ու գերմանական զինվորները քիչ կորուստներ տվին, վորովհետև ունեյին կազմակերպված լեռնային տուրիզմ և ծանոթ էյին լեռնային պայմաններին, ճանապարհներին և առանձնահատկութիւններին :

Մի շարք պատերազմների վորձը ցույց է տվել, վոր այն յերկիրը, վորտեղ գոյութիւն չի ունեցել կազմակերպված լեռնային տուրիզմ, հաճախ լեռների դժվարին պայմաններում մնացել է անողնական և պարտվել է : Պարզ է միանգամայն, թե տուրիզմը, այն էլ լեռնային տուրիզմը, ինչպիսի խոշոր նշանակութիւն ունի յերկրի պաշտպանութեան ամրացման համար : Պրոլետարտուրիստը պետք է ծանոթ լինի իր յերկրի բոլոր լեռնային ճանապարհներին ու պայմաններին և հեշտութեամբ լեռնային դժվար յերթեր կատարի :

Տուրիստը պետք է լինի տոկուն, ճարպիկ, աննկուն և հեշտութեամբ կարողանա դիմանալ բնութեան բոլոր արհաւիրքներին : Պրոլետարտուրիստն ամեն բոլոր պատրաստ պետք է լինի Կոմունիստական կուսակցութեան առաջին իսկ կոչին, մարտապաշտ նետվելու՝ պաշտպանելու համար պրոլետարական դիկտատուրայի յերկիրը իմպերիալիստական դիկտաիչների հարձակումներից :

Պրոլետարտուրիստական եքսկուրսիոն աշխատանքների ծավալմանը լայն հնարավորութիւններ ընձեռնելու և նրան բնդառաջելու համար դոյութիւն ունեն որենքով սահմանված արտոնութիւններ : Թե յերկաթուղային և թե ջրային տրանսպորտից ոգտվելու համար եքսկուրսանտներին տրվում են 50 տոկոս գեղջով լիտերներ :

Եքսկուրսիաների համար տեղերում ստեղծվում են հանրակացարաններ և հատուկ ճաշարաններ, վորոնցից նրանք ոգտվում են շատ եթան գներով :

ԼԵՌՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑՆ Ե ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ :

ՄԵՐ ՈՒՂԵՑՈՒՅՑՆ Ե ՇԿ(Բ)Կ ՄԱՐՇՐՈՒՏԸ՝ 5-ԱՄՅԱԿԸ 4 ՏԱՐՈՒՄ

ՊՏԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ զօրծարաններում, թան-
գարաններում և այլ վայրերում ունեն հատուկ
եքսկուրսավարներ, վորոնք եքսկուրսանտներին
բացատրություններ են տալիս: Եքսկուրսանտ-
ներին տրվում են հացի գրքուկներ, վորպեսզի
ամենուրեք կարողանան անմերժում մատակա-
րարվել: Շատ քաղաքներում կան հատուկ սու-
րիստական խանութներ, վորտեղ ապրանքը տալիս
են միայն տուրիստ-եքսկուրսանտներին:

ՊՐՈՒԵՏ-ՏՈՒՐԻՋՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դեռ անցյալ տարի հունվար ամսին Հայաս-
տանում կայացավ պրոլետ-տուրիստական առա-
ջին համագումարը, վորը լուծեց մի շարք կազ-
մակերպական սկզբունքային խնդիրներ: Այս կազ-
մակերպության գործը վրաստանում և Ադրբե-
ջանում անհամեմատ ավելի լավ հիմքերի վրա յե
դրված, քան մեղանում:

Մեզ մոտ կան չըջաններ, կազմակերպու-
թյուններ, վորոնք չգիտեն թե ինչ և տուրիզ-
մը և ինչի յե ծառայում այն: Դրա հիմնական
պատճառներից մեկն այն և, վոր մեզ մոտ հայերեն
տուրիստական գրականություն տառացի իմաս-
տով գոյություն չունի: Այսօր Հայաստանում ըն-
դամենը 18 չըջանում կան տուրիստական կազմա-

կերպություններ 15000 անդամներով: Այս շատ
չնչին թիվ և: Հայաստանի կազմակերպությունը
նույնիսկ կենտրոնում չունի մի բազա, թեկուզ մի
հատիկ սենյակով, վորը կայան դառնա եքսկուր-
սանտների համար:

Պրոլետարական տուրիզմը մեկն և սոցիալիս-
տական շինարարությանն ոժանդակող միջոցներից
և լավագույն միջոցն և բանվորական և աշխատու-
վորական մասսաների կուլտուր-գիտական հան-
գրատի կազմակերպման գործում:

Պետք և լայնորեն մասսայականացնել պրոլե-
տարական տուրիզմի խնդիրներն ու նպատակնե-
րը, պետք և ամենուրեք ստեղծել Պրոլետ-Տու-
րիստական Եքսկուրսիտոն Ընկերության կազմա-
կերպություններ և ձեռնամուխ լինել գործնական
աշխատանքների:

ԱՄԵՆ ՄԻ ՏՈՒՐԻՍՏ՝ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ Ե, ԻՍԿ
ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԲՁԻՁ՝ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԷԷԶ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ

ՀԱՅԷԷԶ սահմաններում տուրիզմի և եֆսկուրսիայի աշխատանքները ծավալելու մասին.

1931 թ. մայիսի 7-ին.

Նպատակ ունենալով ՀԱՅԷԷԶ սահմաններում լայնորեն ծավալել տուրիզմն ու եֆսկուրսիաները՝ աշխատավորական մասսաների քաղաքական կուլտուր-կրթական զարգացման մակարդակի բարձրացմանն աջակցելու, սոցիալիստական շինարարության ակտիվ աշխատանքներին նրան մասնակից անելու, այդ շինարարության նվաճումներին ծանոթացնելու, յերկրի եկոնոմիկան, աշխարհագրական պայմանները և ազդադրական առանձնահատկություններն ուսումնասիրելու, նաև աշխատավորության համար կուլտուրական հանգիստ կազմակերպելու համար, Ժողովրդական կոմիսարներին Խորհուրդը վորոշում է՝

1. ՀԱՅԷԷԶ եֆսկուրսիոն-տուրիստական բոլոր տեսակի աշխատանքները կենտրոնացնել Պրո-

լետ-Տուրիզմի և Եֆսկուրսիաների Ընկերության (ՊՏԵԸ) մեջ:

2. Արգելել ՀԱՅԷԷԶ սահմաններում եֆսկուրսիաներ կազմակերպել առանց պրոլետ-տուրիզմի մարմինների գերություն:

3. Առաջարկել Լուսժողովոմատին Կենտրոնական Եֆսկուրսիոն բյուրոյի 1930 թ. կազմակերպված եֆսկուրսիոն բաղանների ամբողջ գույքը հանձնել Պրոլետ-տուրիստական և Եֆսկուրսիոն Ընկերության:

4. Առաջարկել համապատասխան շրջործակողներին անմիջապես և առանց վճարի չենքեր հատկացնել ՀԱՅԷԷԶ պրոլետ. Ընկերությանը Ֆերեվանում, Լենինականում, Ալլահվերդում, Ստեփանավանում, Ղարաքիլիսայում, Արթիկում, Ղազնաֆարում, Սարդարաբատում, Վաղարշապատում, Դավալվում, Ֆելենովկայում, Զիրուխովում, Դիլիջանում, Կարմիր գյուղում, Նադեժդինոյում, Ղափանում՝ եֆսկուրսիոն-տուրիստական բաղաններ կազմակերպելու համար:

5. Հանձնարարել համապատասխան Ժողովոմատներին և տնտեսական մարմիններին ՊՏԵ Ընկերության հետ միասին մշակել եֆսկուրսիոն տուրիստական աշխատանքների որացուցային կոնկրետ պլանը:

6. Առաջարկել հիմնարկներին ու ձեռնարկություններին թույլ տալ եքսկուրսիոն տուրիստական խմբերին դիտելու հիմնարկներն ու ձեռնարկությունները միայն ՊՏԵ Ընկերության Հանրապետական ինտերդիկտիվ և տեղական մարմինների գրավոր միջնորդության դեպքում :

7. Թույլատրել այլ քաղաքներից յեկող եքսկուրսիոն տուրիստական խմբերին դիտել դործարանները նաև սահմանված ուրերից դուրս :

8. Հանձնարարել ՀԱՄԽ-ին հատկացնել ՊՏԵ Ընկերությանը համապատասխան միջոցներ :

9. Առաջարկել Հողփողկոմատին և Կոլտնտկեստրոնին հատուկ ուշադրություն դարձնել ծափալելու եքսկուրսիաները, վորպես կուլտուրական և խորհրդային տնտեսական շինարարության պրոպագանդայի և ագիտացիայի գործնական միջոցներից մեկը :

10. Առաջարկել Հողփողկոմատին, Ժողտնտխորհին և շահադրդոված տնտեսական կազմակերպություններին ուշադրություն դարձնել ծափալելու արտագրական եքսկուրսիաներ՝ փորձի փոխանակման և բանվորների ու մանուգետների փորակի բարձրացման նպատակով :

11. Պրոլետ-Տուրիզմի և Եքսկուրսիաների Ընկերության աշխատանքների մեջ մտցնել նաև

դպրոցական եքսկուրսիաների կազմակերպելը : Այդ նպատակով առաջարկել Լուսժողկոմատին Պրոլետ-Տուրիստական և Եքսկուրսիոն Ընկերության հետ միասին մշակել հատուկ ծրագիր :

12. Առաջարկել Առժողկոմատին և ՀՍԽՀ Կարմիր ինչի Ընկերությանը՝ միջոցներ ձեռք առնել ապահովելու տուրիստների ու եքսկուրսիաների սանիտարական հսկողությունը և բժշկական աջակցության գործը :

13. Առաջարկել ՀՍԽՀ Պետհրատին տպագրել տուրիստական գրականություն :

Ժողովրդական Կոմիտեաների ինտերդիկտիվ նախագահի տեղակալ՝ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

Ժողովրդական Կոմիտեաների ինտերդիկտիվ գործերի կառավարիչ՝ Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Յերեան .

ՊԵՏԼՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավիխ 7475 (բ)

Հրատ. № 2196

Պատվեր 1421

Տիրած 2000

Սրբագրեց՝ Պ. ՍԱՐՈՅԱՆ

Հանձնված է արտադրութեան ապրիլի 25-ին 1932 թ.

Ստորագրված է տպելու մայիսի 13-ին 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0309995

ԳԻՆԸ 15 Կ. (3/4 Մ.)

10173



Д е р е н и к

О пролетарском туризме

Госиздат ССРА.

Эривань